ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2016թ. 4-րդ եռամսյակ /

	4-րդ եռամսյակ
1. Ստացվել են նամակներ ընդամենը	691
որից՝	
աջակցություն	673
առաջարկություն	1
հարցում	3
բողոք	*14*
այդ թվում՝	
կրկնակի	9
կոլեկտիվ	9
2. Ըստ հարցի բնույթի՝	
բնակարանային	11
կոմունալ-կենցաղային	15
շինարարական	8
արդձեռ/տրանսկապ/	3
գյուղատնտեսական	6
բնութ. պահպանութ	1
առևտրի	-
կենսաթոշակի և նպաստի	3
առողջապահության	44
կրթական և մանկ.հիմն	44
գիտութ.կուլտուրա	-
ֆինանսական	314
օրենսդրական	2
քաղ. և որդեգրման	2
աշխ.տեղ և հաշվառման	132
հողհատկացում և հողօգտ.	1
միգրացիոն ծառ. վերաբերյալ	-
ապարատային	90
այլ հարցեր	15

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականի չորրորդ եռամսյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականի չորրորդ եռամսյակում քաղաքացիներից ստացվել է 691 դիմում, որից 673-ը՝ աջակցության խնդրանքով, 14-ը՝ բողոք, 1-ը՝ առաջարկություն, 3-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 36 դիմումներին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 132 դիմումներից դրական լուծում է ստացել 22-ը, մյուսները վերցվել են հաշվառման:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 17 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 314 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 300 հոգու: Անվճար բուժսպասարկման հարցով դիմած 13 քաղաքացիներից բավարարվել է 11-ի խնդրանքը, 4 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 22 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2016 թվականի չորրորդ եռամսյակում կատարվել է 257 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: